ԱՌԱՋԱՐԿ

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-438-10.01.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «բ» ենթակետը.

Հոդված 2. Նախագծի 5-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

4. Արգելվում է սկսել ուսումնասիրություններ, եթե անցել են քրեական գործի հարուցման վաղեմության ժամկետները:

Հոդված 3. Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

2.Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ հայտնի հանգամանքները՝ իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրվող ժամանակահատվածը, որը կարող է ներառել բացառապես սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընկած ժամանակահատվածը:

Հոդված 4. Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասից հանել «սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ» բառերը:

Հոդված 5. Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ անձը, ում պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, չի ապացուցել գույքի ձեռքբերման օրինականությունը» նախադասությունը:

Հոդված 6. Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

1. Դատարանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով կայացնում է վճիռ՝հիմք ընդունելով հայցվորի և պատասխանողի կողմից ներկայացված ապացույցները:

Հոդված 7. Նախագծի 22-րդ հոդվածից հանել 3-րդ մասը:

Հոդված 8. Նախագծի 22-րդ հոդվածի 5-րդ մասում «քսանհինգ» բառը փոխարինել «հիսուն» բառով: